ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.04.2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/102

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Դասո Պրինտ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հ.Ղևոնդյանի (լիազորագիր՝ տրված 27.04.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.04.2021թ. թիվ 26/26-1/5970-2021 գրությամբ «Դասո Պրինտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) 14.04.2021թ. թիվ ՊՆ/02/1947-2021 գրության հիման վրա 20.04.2021թ. թիվ 26/26-1/5970-2021 գրությամբ նախաձեռնել է «Դասո Պրինտ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Դասո Պրինտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Դասո Պրինտ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/102 ընթացակարգի շրջանակներում 27.04.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է հետևյալը.

«Քանի որ Ընկերության կողմից Հավելված 1-ը ճիշտ է լրացված եղել, ի սկզբանե նպատակ չենք ունեցել մասնակցել 51-55-րդ չափաբաժիններին Հավելված 1-ը չենք շտկել և մեր գիտակցմամբ Հավելված 2-ում է առկա եղել թերություն, այն է՝ լրացված են եղել 51-55-րդ չափաբաժինները, ակնկալել ենք, որ Հավելված 2-ը պետք է տրվի շտկման, բայց քանի որ չի տրվել շտկման կարծել ենք, որ հավելված 2-ը նույնպես ճիշտ է լրացվել»:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 14.04.2021թ. թիվ ՊՆ/02/1947-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-8/2» ծածկագրով գնման ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «Դասո Պրինտ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Մասնակից): Մասնակցի հայտը գնահատելիս գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է անհամապատասխանություն, մասնավորապես՝

Մասնակցի կողմից գնային առաջարկ է ներկայացվել ընթացակարգի 51-55-րդ չափաբաժինների մասով, սակայն Ձեր կողմից ներկայացված Հավելված 1-ում վերը նշված չափաբաժինները բացակայում էին:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել էր հայտերի գնահատման նիստը և 05.04.2021թ ծանուցել էր Մասնակցին սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկելու անհամապատասխանությունները:

Սահմանված ժամկետում «Դասո Պրինտ» ՍՊԸ-ն չի շտկել անհամապատասխանությունները, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը 07.04.2021թ. մերժել է «Դասո Պրինտ» ՍՊԸ հայտը ընթացակարգի 51-55-րդ չափաբաժինների մասով:

Կից ներկայացվում են Մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/102 ընթացակարգի շրջանակներում 27.04.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/102 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/102 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար տպագրական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-8/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Դասո Պրինտ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.04.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Դասո Պրինտ» ՍՊԸ-ի կողմից գնային առաջարկ է ներկայացվել ընթացակարգի 51-55-րդ չափաբաժինների մասով, սակայն ներկայացված Հավելված 1-ում նշված չափաբաժինները բացակայել են:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 05.04.2021թ. ծանուցել է Ընկերությանը՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

5. Նույն արձանագրության համաձայն՝ 07.04.2021թ. նիստի ընթացքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ արձանագրված անհամապատասխանություններն Ընկերության կողմից սահմանված ժամկետում չեն շտկվել և որոշում կայացրել վերջինիս հայտը՝ Ընթացակարգի 51-55-րդ չափաբաժինների մասով, մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 20.04.2021թ. թիվ 26/26-1/5970-2021 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 14.04.2021թ. թիվ ՊՆ/02/1947-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ ***գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,***

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ

մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար տպագրական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-8/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Դասո Պրինտ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.04.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Դասո Պրինտ» ՍՊԸ-ի կողմից գնային առաջարկ է ներկայացվել ընթացակարգի 51-55-րդ չափաբաժինների մասով, սակայն ներկայացված Հավելված 1-ում նշված չափաբաժինները բացակայել են:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 05.04.2021թ. ծանուցել է Ընկերությանը՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Նույն արձանագրության համաձայն՝ 07.04.2021թ. նիստի ընթացքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ արձանագրված անհամապատասխանություններն Ընկերության կողմից սահմանված ժամկետում չեն շտկվել և որոշում կայացրել վերջինիս հայտը՝ Ընթացակարգի 51-55-րդ չափաբաժինների մասով, մերժելու վերաբերյալ:

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

Ընդ որում Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***Հակառակ դեպքում տվյալ*** մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվել է անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ, սակայն սահմանված ժամկետում անհամապատասխանությունը չի շտկել, այսինքն՝ «Դասո Պրինտ» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-8/2» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.04.2021թ. թիվ 26/26-1/5970-2021 գրությամբ «Դասո Պրինտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով

նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Դասո Պրինտ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**